



Ընտրությունների ձեռնարկ

**Տեղական ինքնակառավարման
մարմինների ընտրություններ
2021 թվականի նոյեմբերի 6 և 7**

Ոչ պաշտոնական թարգմանություն



2021 թ. նոյեմբերի 6-ին և 7-ին
կայանալիք տեղական
ինքնակառավարման մարմինների
ընտրության արդյունքում կընտրվեն
քաղաքապետ, համայնքների
ղեկավարներ, ինչպես նաև՝ քաղաքի և
համայնքների ավագանու անդամներ:

103 անձինք, ովքեր **կընտրվեն** այս
ընտրություններում, ձեզ կներկայացնեն
մինչև 2025 թվականը: Ձեր ձայնը
կնպաստի քաղաքի զարգացմանը:

Քվեարկելու համար ընտրողները պետք է
ընդգրկված լինեն ընտրացուցակում:



Ո՞վ կարող է քվեարկել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը :

Քվեարկելու համար անձը պետք է ընդգրկված լինի ընտրացուցակում, **18 տարին լրացած լինի** 2021 թվականի նոյեմբերի 7-ի դրությամբ և 2021 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ պետք է բավարարի հետևյալ պայմաններին:

- Լինել Կանադայի քաղաքացի,
- Չլինել ինամակալություն ներքո,
- Լինել
 - **Մոնրեալի բնակիչ** եւ առնվազն 6 ամիս ապրելիս լինել քվեբեկում, Կամ
 - առնվազն 12 ամիս լինել Մոնրեալում գտնվող որևէ անշարժ գույքի սեփականատեր կամ որևէ ձեռնարկության տարածք զբաղեցնող անձ:

Ինչպե՞ս իմանալ, արդյոք ընդգրկված եմ քվեարկելու համար:

Տես սույն ձեռնարկին կից **գրանցման ծանուցման** թերթիկի վերին հատվածը: Եթե ձեր անունը առկա է, ապա դուք արդեն ընդգրկված եք ընտրացուցակում:

Ընտրացուցակում **ձեր ընդգրկված լինելը կարող եք ստուգել elections.montreal.ca** կայքում:

Քվեարկելու համար, ձեր անունը պետք է ընդգրկված լինի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրացուցակում:



Ի՞նչ պետք է անել ընտրացուցակում ընդգրկվելու կամ ծանուցման թերթիկում անճշտություններ հայտնաբերելու դեպքում:

2021 թ. հոկտեմբերի 12-ից 18-ը ընկած ժամանակահատվածում ներկայանալ ձեր նախընտրած վերստուգիչ **հանձնաժողով**: Վերստուգիչ հանձնաժողովի ցանկը կարող եք գտնել ձեր ստացած ծանուցման թերթիկի մեջ:

2021 թվականի հոկտեմբերի 18-ից հետո այլևս հնարավոր չի լինի գրանցվել քվեարկության համար:

Ես բնակվում եմ Մոնրեալում և առողջական պատճառներով չեմ կարողանում տեղաշարժվել: Ինչպե՞ս կարող եմ գրանցվել:

Այցելել elections.montreal.ca կայքը և տպել *Ընտրացուցակի վերանայման դիմում-հայտը*: Լրացրեք այս դիմում-հայտը և վերադարձեք այն հաստատող փաստաթղթերի պատճենների հետ միասին: Ձեր դիմում-հայտն անհրաժեշտ է ներկայացնել ամենաուշը մինչև 2021 թվականի հոկտեմբերի 18-ը: Խնդրում ենք հաշվի առնել փոստային առաքման հետ կապված հետաձգումները:

Ես ապրում եմ տարեցների մասնավոր կացարանում, ապաստանում, ժամանակավոր ընդունարանում կամ այլ համապատասխան հաստատություններում: Ինչպե՞ս կարող եմ գրանցվել:

Այցելեք elections.montreal.ca կայք ծանոթանալու համար **համապատասխան հաստատությունների ցանկին** և *ներբեռնելու ընտրացուցակի վերանայման* դիմում-հայտի ձևաթուղթը: Տպեք եւ լրացրեք այս ձեւաթուղթը: Վերադարձեք այն հաստատող փաստաթղթերի պատճենների կամ տվյալ հաստատության լիազոր աշխատակցի կողմից տրված հավաստագրի հետ միասին: Ձեր դիմում-հայտն անհրաժեշտ է ներկայացնել ամենաուշը մինչև **2021 թվականի հոկտեմբերի 18-ը**: Խնդրում ենք հաշվի առնել **փոստային առաքման ժամկետները**:

2021թ-ի հոկտեմբերի 12-ից 18-ը ընկած ժամանակահատվածում կարող եք նաև անձամբ ներկայանալ որևէ վերստուգիչ հանձնաժողով: Ձեր կինը կամ ծնողը կարող են դիմել ձեր փոխարեն:



Ե՞րբ եմ կարող քվեարկել:

Կարող եք քվեարկել երկու շաբաթավերջերի ընթացքում:

Վաղաժամ քվեարկությունը տեղի կունենա **շաբաթ օրը՝ 2021 թվականի հոկտեմբերի 30-ին** եւ կիրակի **օրը՝ հոկտեմբերի 31-ին** 9:30-ից մինչև 20:00-ն:

Ընտրությունները տեղի կունենան **2021 թվականի նոյեմբերի 6-ին՝ շաբաթ և նոյեմբերի 7-ին՝ կիրակի** օրերին 9:30-ից 20:00-ն:

Որտե՞ղ եմ քվեարկելու:

Ստուգեք elections.montreal.ca կայքում «Որտե՞ղ եմ քվեարկելու» բաժինը: Այդ կայքում մի քանի սեղմումով դուք կգտնեք ձեր ընտրատեղամասի հասցեն:

Վաղաժամ քվեարկությանը նախորդող օրերին նաեւ *հիշեցման քարտ* կուղարկվի նաև գրանցված ընտրողներին:



Առողջական նկատառումներից ելնելով՝ ես ի վիճակի չեմ տեղաշարժվելու կամ տեղաշարժվել չկարողացող անձի խնամակալն եմ: Ինչպե՞ս կարող եմ քվեարկել:

Այն ընտրողներին, ովքեր առողջական պատճառներով չեն կարողանում տեղաշարժվել, ինչպես նաև նույն հասցեում բնակվող նրանց խնամակալին առաջարկվում է փոստային քվեարկություն:

Փոստային քվեարկությանը մասնակցելու համար լրացրեք տրված **դիմում-հայտը**, որը գտնվում է elections.montreal.ca կայքում կամ զանգահարեք 514 872-VOTE (8683):

Փոստային քվեարկությանը մասնակցելու ձերը դիմում-հայտը պետք է ներկայացնել **ոչ ուշ, քան 2021 թվականի հոկտեմբերի 27-ը:**

Ես ապրում եմ տարեցների մասնավոր կացարանում, ապաստանում, ժամանակավոր ընդունարանում կամ այլ համապատասխան հաստատություններում: Ինչպե՞ս կարող եմ քվեարկել:

Քվեարկությանը կարող եք մասնակցել փոստով՝ դիմելով ոչ ուշ, քան 2021 թվականի հոկտեմբերի 27-ը: Փոստային քվեարկությունը փոխարինում է շարժական տեղամասին:

Դուք կարող եք նաև քվեարկել անձամբ՝ նախնական հարցումից առաջ ձեր ուղարկված **հիշեցման քարտում** նշված վայրում:

Արդյոք COVID-19-ը ազդեցություն կունենա իմ քվեարկության իրավունքի վրա:

Քվեարկության վայրերում **կկիրառվեն** առողջապահության նախարարության կողմից սահմանված **սանիտարական միջոցներ:** Դուք այնտեղ կարող եք **ապահով քվեարկել:** Եթե COVID-19-ի պատճառով անհրաժեշտ է **ինքնամեկուսանալ**, ապա կարող եք **ներկայացնել փոստով քվեարկելու ձեր դիմումը 2021 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 27-ը:** Կարող եք ներկայացնել դիմում լրացնելով elections.montreal.ca կայքում գտնվող ձևաթուղթը կամ զանգահարելով 514 872-VOTE (8683) համարին:

COVID-19-ի պատճառով մեկուսացված մարդիկ, ովքեր ցանկանում են դիմել **վերստուգիչ հանձնաժողով**, պետք է ներկայացնեն **գրավոր դիմում:** Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021 թվականի հոկտեմբերի 18-ը, ժամը 19:00-ն:

Ո՞վ կարող է քվեարկել փոստով:

Փոստային քվեարկությունը նորություն է այն ընտրողների համար, ովքեր:

- բնակվում են Մոնրեալում գտնվող համապատասխան տարեցների **կացարանում**,
- **չեն կարողանում տեղաշարժվել** կամ հանդիսանում են Մոնրեալի նույն հասցեում բնակվող **քվեարկողի խնամակալ**,
- **COVID-19-ի** պատճառով գտնվում են **մեկուսացման** մեջ:



Ինչպե՞ս կարող եմ պատրաստվել քվեարկելուն:

Ձեր շրջանի **թեկնածուների ցանկը** հասանելի է elections.montreal.ca կայքում:

Քվեարկության վայրերում անհրաժեշտ է կրել բժշկական դիմակ կամ դեմքի ծածկոց: Նույնականացվելու համար դուք պետք է կարճ ժամանակով հանեք ձեր դիմակը:

Քվեարկելու համար անհրաժեշտ է՝

- **բժշկական դիմակ** կամ դեմքի ծածկոց,
- սեւ կամ կապույտ գրիչ կամ մատիտ,
- ձեր առողջության ապահովագրության քարտը, վարորդական իրավունքի վկայական, կանադական անձնագիր, հնդկացու կարգավիճակի վկայական կամ Կանադայի զինված ուժերի քարտ:

Քվեարկության վայրերը **հասանելի են բոլորին:** Կապ հաստատեք մեզ հետ, որպեսզի ավելին իմանաք այն միջոցների մասին, որոնք կհեշտացնեն ձեր ձայնի իրավունքի իրացումը:

Ես կցանկանայի աշխատել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Ի՞նչ պետք է անել:

Բազմաթիվ **վճարովի աշխատատեղեր** հասանելի կլինեն հոկտեմբերի 30-ին և 31-ին, ինչպես նաև նոյեմբերի 6-ին և և 7-ին:

Լրացրեք **առցանց** դիմումի ձևը:

Մասնավորապես պետք է լինել **16 տարեկան և ավել**, ունենալ սոցիալական ապահովագրության համարանիշ և ունենալ վավերական էլ. փոստի հասցե:

Կապ հաստատել մեզ հետ՝

- 514 872-VOTE (8683)
- elections.montreal.ca
- elections@montreal.ca

Անձամբ ներկայանալ Մոնրեալի 25 ընտրատեղամասերից որևէ մեկը:

